ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

23.10.2020 *Ք. Իջևան*

Մասնակցում էին գիտխորհրդի 24 անդամներից 20-ը.

ՕՐԱԿԱՐԳ

1. 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփման մասին /Զեկուցող՝ Կ. Պողոսյան /:
2. Առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին /Զեկուցող՝ Կ. Պողոսյան/:
3. Ավարտական աշխատանքների թեմաների հաստատում: / Զեկուցող՝ Կ. Պողոսյան/
4. Ամբիոնների 2020-2021 ուստարվա աշխատանքային պլանների հաստատման մասին: / Զեկուցող՝ Կ. Պողոսյան/
5. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2020-2021 ուստարվա I կիսամյակի աշխատանքային պլանի քննարկման և հաստատման մասին: / Զեկուցող՝ Կ. Պողոսյան/
6. Ամբիոններում 2020-2021 ուստարվա առարկայական փաթեթների առկայության մասին: /Զեկուցող՝ ամբիոնի վարիչներ/
7. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցող Կ. Պողոսյանը ներկայացրեց 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփումը: Նա նշեց, որ լուծարքային շրջանը կազմակերպվել է Zoom հարթակի միջոցով՝ ժամանակացույցին համապատասխան, խախտումներ և բացթողումներ չեն արձանագրվել: Լուծարքային շրջանին մասնակցած ուսանողների գերակշիռ մասը դրական գնահատական է ապահովել 1-ին լուծարքային շրջանի ժամանակ: Զեկուցողը ըստ կուրսերի ներկայացրեց լուծարքային շրջանի ընդհանուր պատկերը.

«Պատմություն» կրթական ծրագրով լուծարքային շրջանին մասնակցել է 3 ուսանող, որոնցից 2-ը ունեցել են երեք և ավելի առարկաներից անբավարար գնահատականներ, իսկ

մեկը՝ երկու առարկայից անբավարար: Նրանք դրական գնահատականներ են ստացել 1-ին լուծարքային շրջանում:

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրով լուծարքային շրջանին մասնակցել է 20 ուսանող: 11 ուսանողներ անբավարար գնահատականներ են ունեցել 1 առարկայից, 6-ը՝ 2, իսկ 3-ը՝ երեք և ավելի առարկաներից: Նրանցից 19-ը 1-ին լուծարքային շրջանում ստացել են դրական գնահատականներ: ՏՄՄ I կուրսի մեկ ուսանող՝ Դիանա Հովսեփյանը, այլ բնակավայր տեղափոխվելու և քննություններին չմասնակցելու պատճառով հեռացվել է մասնաճյուղից:

«Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրով լուծարքային շրջանին մասնակցել է 3 ուսանող: Նրանք անբավարար գնահատականներ են ունեցել մեկ առարկայից և դրական գնահատականներ են ստացել 1-ին լուծարքային շրջանում:

«Օտար լեզու և գրականություն» կրթական ծրագրով լուծարքային շրջանին մասնակցել է 15 ուսանող: Նրանցից 14-ը անբավարար գնահատականներ են ունեցել մեկ առարկայից, իսկ 1-ը՝ երկու առարկայից, և դրական գնահատականներ են ստացել 1-ին լուծարքային շրջանում:

«Հոգեբանություն», «Հայոց լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրերով բոլոր ուսանողները ստացել են դրական գնահատականներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., ասիստենտ Վ. Աղաբաբյանը, բ.գ.թ, դոցենտ Ք. Հարությունյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի լուծարքային շրջանի ընթացքը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցող Կ. Պողոսյանը ներկայացրեց 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը: Զեկուցողը նշեց, որ ելնելով համաճարակային իրավիճակից՝ ԵՊՀ գիտխորհրդի կողմից որոշվել է, որ յուրաքանչյուր կուրսի համար ընթացիկ քննությունների և ստուգումների թիվը չգերազանցի երեքը: Նա նշեց, որ առարկաների ընտրությունը

քննարկվել է ուսանողների հետ: Բացի այդ՝ քննությունները կիրականացվեն հեռահար եղանակով՝ ZOOM հարթակի միջոցով:

Զեկուցողը փաստեց, որ առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների հարցաշարերը ժամանակին տրամադրվել են ուսանողներին: Այժմ ստուգվում է ֆակուլտետում առարկայական ծրագրերի կատարման ընթացքը: Ստուգվում է ծրագրերի կատարողականը և դրան համապատասխան՝ մատենավարության վիճակը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, բ.գ.թ, դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների ընթացքը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը ներկայացրեց ֆակուլտետում ուսուցանվող հինգ կրթական ծրագրերի կողմից տրված ավարտական աշխատանքների թեմաները: Գիտական ղեկավարների կողմից առաջադրված թեմաները նախապես քննարկվել են ամբիոններում, համապատասխանում են գիտականության չափորոշիչներին, արդիական են:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ. Դ. Թինոյանը, մ.գ.թ., ասիստենտ Լ. Հարությունյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը: Նրանք նշեցին, որ ամբիոններում քննարկվել են թեմաների վերնագրերը, հստակեցվել ավարտական աշխատանքներին ներկայացվող պահանջները:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել 2020-2021 ուստարվա ավարտական աշխատանքների թեմաները:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը արձանագրեց, որ կիսամյակի կտրվածքով ամբիոնների աշխատանքային գործունեության պլանավորման անհրաժեշտությունը դարձել է կարևոր խնդիր: Համավարակի և հեռավար ուսուցման պայմաններում դա առավել ևս կդյուրացնի ամբիոնների աշխատանքների կանոնակարգումը և վերահսկողությունը: Ամբիոնների աշխատանքային պլանները քննարկվել են ամբիոնային նիստերում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ. Դ. Թինոյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի կառուցվածքում գործող Հայոց պատմության և հասարակագիտության, Հայոց լեզվի և գրականության, Մանկավարժության և հոգեբանության, Օտար լեզուների ամբիոնի 2020-2021 ուստարվա աշխատանքային պլանները:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Զեկուցողը նշեց, որ համավարակի պայմաններում ֆակուլտետի 2020-2021 ուստարվա ուսումնական գործունեությունը կազմակերպված և նպատակային վարելու առումով աշխատանքային պլանում կատարվել են որոշակի փոփոխություններ: Այս փոփոխությունները թույլ են տալիս ֆակուլտետի գործունեությունը դարձնել առավել ճկուն և արդյունավետ: Զեկուցողը հայտնեց, որ աշխատանքային պլանը նախապես քննարկվել է դեկանատի նիստում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ. Դ. Թինոյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի աշխատանքային պլանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 6-րդ հարցի վերաբերյալ զեկուցեցին ամբիոնի վարիչները: Նրանք նշեցին, որ ամբիոններում առարկայական փաթեթները հիմնականում առկա են: Ընքացքի մեջ են այն փաթեթները, որոնց ուսումնական պլաններում փոփոխություններ են տեղի ունեցել: Բացի այդ՝ կան նաև կամընտրական առարկաներ, որոնք դասավանդվում են վերջին տարին և այդ առարկաների համար գրվել են առարկայական ծրագրեր:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, բ.գ.թ, դոցենտ Լ. Թումանյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ամբիոններում առարկայական փաթեթների վիճակը համարել բավարար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Կ. Պողոսյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ Վ. Աղաբաբյան